

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱԿՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ



www.e-mark.am
+374 10 300 300



ԻՆՉ Է ՀՅՎԻԶ (ՆՈՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ) ՆՃԱՆՆԵՐՈՎ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ և ՌՐՆ Ե ԳՐԱ ՆՊԱՏԱԿԸ

Հսկիչ (տույնականացման) նշաններով ապրանքների դրոշմավորումը հնարավորություն է տալիս սահմանել շուկայում ապրանքաշրջանառության նկատմամբ վերահսկողություն ամեն հատ ապրանքի համար՝ պաշտպանելով սպառողների, բարեխղիք տնտեսվարողների շահերը: Ապրանքների դրոշմավորման համակարգը հնարավոր է դարձնում բացառել չարոտնագրված ապրանքատեսակների մուտքը շուկա, կանխել ապօրինի առևտրաշրջանառությունը և դրա բացասական հետևանքները երկրի տնտեսության վրա:

Ապրանքների դրոշմավորումն իրականացվում է փուլային տարբերակով՝ ամեն ապրանքախմբի համար սահմանելով **փորձնական և պարտադիր** դրոշմավորման ծրագրեր: Մինչ պարտադիր դրոշմավորման մեկնարկն անց է կացվում փորձնական փուլը, որի նպատակն է դրոշմավորման ենթակա ապրանքների ապրանքաշրջանառության ամբողջ ցիկլի գործառնությունների փորձարկումը և կարգավորումը:

Ապրանքների դրոշմավորման ազգային օպերատորի՝ „E-mark“ ընկերության կողմից տրամադրվող դրոշմավորման համակարգում գրանցվելով՝ տնտեսվարողը կարող է պատվիրել Դատա մատրիքս (Data Matrix) ծածկագրեր ինչպես սպառողական, այնպես էլ խմբային փաթեթավորման կամ հավաքածուի համար:

ԱՊՐԱՆՔԱՆԻՋՆԱՌՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ, ԱՊՐԱՆՔԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ և ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՄՔՈՂՋ ԳՐՈՇԵՆԹԱՑԸ

Ապրանքի հետազննելիության, ապրանքաշրջանառության ամբողջական գործընթացը սկսվում է արտադրող կամ ներմուծող տնտեսվարողի կողմից ապրանքների դրոշմավորման ավտոմատացված տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ համակարգ) ծածկագրերի պատվիրումից և դրանք ապրանքների վրա փակցելուց:

Ապրանքախմբի առանձնահատկությունից ելնելով՝ Նույնականացման միջոցների կիրառման կարգը օրենսդրության տարբեր կերպ է կարգավորվում: Օր.՝ ծխախոտային տուփի դեպքում պարտադիր է ծածկագրի ուղիղ մակնշումը տուփի ստորին հատվածում, իսկ այլոհոլային արտադրանքի, փաթեթավորված խմելու ջրի դեպքում մակնշումը կարող է կատարվել փաթեթավորման ցանկացած տվածում՝ բացառությամբ ստորին մասի:

Հաջորդ փուլում վաճառքի դուրս բերվող ապրանքների ծածկագրերը դրվում են շրջանառության մեջ համակարգում ստեղծելով համապատասխան «Շրջանառության մեջ ընել» հաշվետվություն, որից հետո միայն ապրանքը համարվում է վաճառքի ենթակա:

Վաճառքի ժամանակ իրականացվում է դրոշմավորված ապրանքների սքանավորում՝ 2D սքաների միջոցով և ապրանքը դուրս է բերվում շրջանառությունից:

ԻՆՉՊԵՏ ԳՐԱՆՑԿԵԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՏԵՆԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆՎԱՌԳՈՒՄ

Համակարգ մուտք գործելու համար տնտեսվարող սուբյեկտը պետք է գրանցված լինի ՀՀ պետական ռեգիստրում, ինչպես նաև պետք է հանդիսանա ՀՀ ռեգիոնետ՝ գրանցված լինի և գործի ՀՀ-ում: Հետևաբար տնտեսվարողը, որը ՀՀ ռեգիոնետ չէ, համակարգից կարող է օգտվել միայն ՀՀ ռեգիոնետ ներկայացուցչի միջոցով:

Մինչ օպերատորի հետ պայմանագիր կնքելը, տնտեսվարողը ստանում է Excel ձևաչափի Ֆայլ, ուր լրացվում են ընկերության վերաբերյալ պահանջվող տվյալները: Ի թիվս այլ տվյալների համակարգում Նույնականացվելու համար օպերատորին անհրաժեշտ կլինի տրամադրել ընկերության պատասխանատու աշխատակիցների ՀԾՀ համարանիշները՝ համակարգում որպես «Օգտատեր» գրանցելու համար: Համակարգ մուտք գործելու համար Օգտատերը Նույնականացվում է ՀՀ-ում գործող Նույնականացման եղանակների՝ Նույնականացման քարտի կամ բջջային Նույնականացման քարտի (mID) միջոցով:

Անհրաժեշտ տվյալները ստանալուց հետո օպերատորի և տնտեսվարողի միջև կնքվում է պայմանագիր, օպերատորն իրականացնում է տնտեսվարողի և նրա աշխատակիցների գրանցումը համակարգում, տրամադրում անհրաժեշտ հասանելիություններ և վերջինիս ծանուցում է այդ մասին էլեկտրոնային փոստի միջոցով:

Վերոնշյալ քայլերից հետո ընկերության աշխատակիցը համակարգում կարող է գրանցել ապրանք և պատվիրել ծածկագիր այդ ապրանքի համար:

ԻՆՉՊԵՍ ԳՐԱՆՑԵԼ ԱՊՐԱՆՔ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ապրանքը գրանցելու համար օգտատերը պետք է գրանցի ընկերության GS1 (GCP) պրեֆիքսը (արտադրող ընկերության դեպքում), այնուհետև լրացնի ապրանքի մասին տեղեկատվություն պահանջվող պարտադիր դաշտերում, ինչպիսիք են՝ ապրանքի GTIN, US9 ԱԱ կոդ, ապրանքախումբը, փաթեթավորման տեսակը և այլն: Ապրանքախմբից կախված՝ պարտադիր դաշտերը կարող են լինել տարբեր: Հարկ է նշել, որ որոշ դաշտեր խմբագրման ենթակա չեն, օր. GTIN, ապրանքախումբ և այլն:

Ապրանքը համակարգում գրանցելուց հետո պետք է այն ուղարկել օպերատորին ստուգման նպատակով՝ սեղմելով «Ուղարկել ստուգման» կոճակը: Որպեսզի ապրանքը հաստատվի օպերատորի կողմից, գործում են հստակ չափանիշները.

- գրանցվող ապրանքի նկարագրությունը պետք է համապատասխանի ապրանքների միջազգային կոդավորման GS1 համակարգում տվյալ ապրանքի համար առկա նկարագրությանը
- սպառողական փաթեթավորման ծածկագրի դեպքում պարտադիր է կցել ապրանքի դիմային նկարը, որի ծավալը չպետք է գերազանցի 10 մբ, իսկ նկարի ֆոնը պետք է լինի բացառապես սև/սպիտակ /ցանկության դեպքում կարելի է կցել նաև ապրանքի կողային կամ ետնային հատվածների նկարները/
- լրացված տեղեկատվությունը պետք է համապատասխանի ապրանքի պիտակի վրա գրված տեղեկատվությանը /օր. անվանում, բրենդ, օձավալ, քանակ և այլն/

Վերոնշյալ չափանիշներին չհամապատասխանելու դեպքում ստուգման ուղարկված ապրանքը կարող է մերժվել օպերատորի կողմից համապատասխան հիմնավորմամբ, որից հետո օգտատերը կարող է խմբագրել այն և կրկին ուղարկել ստուգման:

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՎԻՆԵԼ ԾԱԾԿԱԳԻՐ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ/ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՏԵՍԱՎԵՐԸ

Ապրանքն օպերատորի կողմից հաստատվելուց հետո տևեստավարողը պետք է հետալրի իր հաշիվը «ՀՏԶԿ-Արմենիա» ՄՊԸ-ի հետ կնքած պայմանագրում նշված իր հաշվեհամարից փոխանցում կատարելով օպերատորի՝ Նույն պայմանագրում նշված հաշվեհամարին՝ վճարման անտորրագրի «Նպատակ» դաշտում նշելով պայմանագրի համարը: Հաշիվը համալրելուց հետո օգտատերը կարող է համակարգում պատվիրել ծածկագիր:

Ըստ փաթեթավորման տեսակի՝ գոյություն ունեն երեք տիպի ծածկագրեր, որոնք հնարավոր է պատվիրել համակարգում.

- **Սպառողական /հատ ապրանքի համար/**
- **Խմբային /արկղի, բլոկի համար, որն իր մեջ ներառում է ագրեգացված սպառողական ծածկագրերը/**
- **Հավաքածու /միատեսակ կամ թեմատիկ ընդհանրությամբ երկու և ավել ապրանք պարունակող հավաքածուի համար/**

Օգտատերն ապրանքը գրանցելիս նշում է փաթեթավորման տեսակը՝ սպառողական, խմբային կամ հավաքածու, և ծածկագրի պատվիրելիս ապրանքի համար համապատասխանաբար նշում է ծածկագրի տեսակը: Այսինքն՝ **եթե ապրանքի բնութագրի մեջ փաթեթավորման տեսակը նշված է «սպառողական», որքան այդ ապրանքի համար ծածկագիր պատվիրելիս «դրոշմավորման ծածկագրի տեսակը» նույնպես պետք է ընտրվի «սպառողական»:**

Համակարգում ծածկագրի պատվիրելու համար անհրաժեշտ է՝

Մուտք գործել «Ծածկագրերի պատվեր» բաժին, ստեղծել պատվեր, լրացնել ապրանքի մասին պահանջվող պարտադիր տեղեկությունը՝ ապրանքախումբ, ապրանքի կոդ (GTIN), դրոշմավորման կոդի տեսակ, կողի քանակ և այլն: Մուտքագրված տվյալները պահպանելուց անմիջապես հետո գրանցած պատվերը արտացոլվում է «Ծածկագրի պատվեր» բաժնում: Սեղմելով «Պատվերի նույնացուցիչի» վրա, ընտրելով «Ապրանքներ» բաժինը՝ սեղմել «Տպագրություն» կոճակը՝ ներբեռնելու համար պատվիրված ծածկագրերը PDF (ծածկագրերի առավելագույն քանակը՝ 500) կամ CSV (ծածկագրերի առավելագույն քանակը՝ 30000) ձևաչափով:

Եթե անհրաժեշտ է պատվերի ֆայլը ներբեռնել մեկից ավել անգամ, ապա ընտրել «Մտացած ԴԿ» բաժինը և կատարել նույն գործողությունը:

Կարևոր է նշել՝

- Պատվերները համակարգի «Ծածկագրի պատվեր» բաժնում հասանելի են միայն 90 օր, որից հետո դրանք արխիվացվում են: Սա նշանակում է, որ պատվերների ֆայլերը նշված ժամանակահատվածից հետո այլևս չեն արտացոլվի համակարգում: Հետևաբար, խորհուրդ է տրվում ներբեռնել և պահպանել դրանք 90 օրվա ընթացքում, եթե պետք է աշխատել այդ ֆայլերի հետ՝ օրինակ, տպագրության համար կամ դրանք հիման վրա հաշվետվություններ կազմելու նպատակով: Հարկ է նշել, որ պատվերներով համակարգում հասանելի չլինելու չի նշանակում, որ դրանցում առկա ծածկագրերը ոչնչանում են կամ դառնում անվավեր:

Ծածկագրերը վավեր են, պարզապես դրանք ֆայլով ներբեռնելու հնարավորությունը սահմանափակվում է 90 օրով:

- Յուրաքանչյուր ապրանքի հսկիչ (տույնականացման) նշանը եզակի է և չի կարող կրկնվել նույն կամ տարբեր տեսակի ապրանքների վրա, հետևաբար մանրածախ վաճառքի ժամանակ անհրաժեշտ է պարտադիր սկանավորել յուրաքանչյուր ապրանքը առանձին:

ԾԱԾԿԱԳՐԻ ՎԱՐՈՎԱԿՏԱՆԵՐԸ ՅԱՄԱՎԱՐՈՒՄ

Ծածկագրերը համակարգում կարելի է տեսնել հետևյալ կարգավիճակներով.

- **Թողարկված** /ոչ լիարժեք, անվավեր ծածկագիր. ծածկագիրը հնարավոր է թողարկել, սակայն վավեր դարձնել ավելի ուշ՝ մակնշեով այն/
- **Մակնշված** /լիարժեք, վավեր ծածկագիր, որը կարող է փակցվել ապրանքի վրա, դրվել շրջանառության մեջ և վաճառվել/
- **Շրջանառության մեջ դրված** /վաճառքի ենթակա ապրանքի դրոշմավորված խմբաքանակը շրջանառության մեջ է ներդրվել/
- **Շրջանառությունից հանված, վաճառված** /ծածկագիրը սքանավորվել է վաճառքի ժամանակ, ապրանքը դուրս է բերվել շրջանառությունից՝ վաճառվել է/
- **Շրջանառությունից հանված, շահագործումից հանված** /ծածկագիրը խտտանվել է/
- **Շրջանառության մեջ դրված, վերադարձված** /ծածկագիրը սքանավորվել է և ձևակերպվել է ապրանքի ետվերադարձ/

ԱՊՐԱՆՔԻ ՊԱՐՏԱԳԻՐ ՍՔԱՆԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՌԵԿՏՎԵՐԱԴԻՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հսկիչ դրամարկղային մեքենա (ՀԳՄ) կիրառող տնտեսվարողները հսկիչ (տույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում ՀԳՄ-ի միջոցով կամ ՀԳՄ-ին միացված ծրագրային և (կամ) տեխնիկական միջոցներով պետք է ապահովել այդ հսկիչ (տույնականացման) նշանների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան՝ հակառակ դեպքում այն համարվում է ՀԳՄ-ի կիրառության կանոնների խախտում:

Հսկիչ (տույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների վաճառքի ժամանակ Data Matrix ծածկագրերի սքանավորման և ՀԳՄ սարքերի միջոցով ՀՀ ՊԵԿ տեղեկատվական շտեմարան տվյալների ուղարկման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

- վաճառքի կետը պետք է ապահովված լինի Data Matrix ծածկագիր ընթերցող 2D սքաներով
- արտաքին (առևտրային) ծրագրի կիրառման դեպքում

ծրագրում պետք է ավելացնել Data Matrix ծածկագիր կարդայու և ՀԳՄ սարքին ուղարկելու նոր գործառույթ

- արտաքին (առևտրային) ծրագրի և ՀԳՄ-ի հնտեզրումը պետք է իրականացվի համաձայն v 0.7.2 ձեռնարկի /Հսկիչ-դրամարկղային մեքենայի մտքագրումը արտաքին (առևտրային) ծրագրերի հետ/

Ապրանքի վաճառքի պահին արձանագրվում է սքանավորելով Դատա մատրիքս (Data Matrix) ծածկագիրը 2D սքաների միջոցով, որով էլ իրականացվում է **ապրանքի շրջանառությունից դուրսբերումը և միաժամանակ ամբողջական ծածկագրերի տվյալների փոխանցումը ՀՀ ՊԵԿ տեղեկատվական շտեմարան:**

Վաճառքի ժամանակ թե սպառողական, թե խմբաքանակի հավաքածուի ծածկագրերը սքանավորվում են նույն սկզբունքով, իսկ խմբաքանակի հավաքածուի ծածկագիրը սքանավորելիս վաճառքից միանգամից դուրս են բերվում դրան կցված/ագրեգացված սպառողական ապրանքների ծածկագրերը:

Կարևոր է նշել, որ սքանավորումը համարվում է հաջողված, այսինքն՝ ապրանքի վաճառքը լիարժեք արձանագրվում է, երբ տվյալ վաճառքի ՀԳՄ կտրոնի վրա արտացոլվում է վաճառվող ապրանքի միավորը «Հսկիչ նշանի քանակ» դաշտում: Եթե ապրանքը սքանավորվում է, սակայն «Հսկիչ նշանի քանակ» դաշտում միավորը «0» է նշվում, ուրեմն վաճառք չի արձանագրվել:

Եթե ապրանքը վաճառվել է խմբային փաթեթավորմամբ, ապա համապատասխան ծածկագրի սքանավորման դեպքում ՀԳՄ կտրոնի վրա առկա «Հսկիչ նշանի քանակ» դաշտում միավորի քանակը արտացոլում է խմբային ծածկագրի քանակը, այլ ոչ խմբային ծածկագրի կցված սպառողական ծածկագրերի քանակը:

Պետք է նշել, որ ապրանքի ետվերադարձի դեպքում այն պետք է սքանավորվի նույն սկզբունքով՝ արձանագրելով վերջինիս ետվերադարձը:

ԱՊՐԱՆՔԻ ՍՔԱՆԱՎՈՐՈՒՄ E-MARK ԲՔՏՆՅՈՒՆ ԶԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ

Ներբեռնելով **E-mark բջջային հավելվածը** Apple Store-ից և Google Play-ից և սքանավորելով ապրանքի վրա մակնշված Դատա մատրիքս (Data Matrix) ծածկագիրը՝ սպառողը կարող է տեսնել ապրանքի մանրամասն բնութագիրը, սուուզե ապրանքի իսկությունը և ապրանքի կարգավիճակը, արդյոք այն վաճառքի ենթակա է թե ոչ, արդյոք շրջանառությունից դուրս է բերվել և այլն:

Այսպիսով՝ ապրանքի վրա փակցված Դատա մատրիքս (Data Matrix) ծածկագիրը թույլ է տալիս իրականացնել ապրանքի տեղաշարժի լիարժեք մոնիթորինգ ցանկացած պահի:

ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱՄ ՆԵՐՄՈՒԾՈՂ

- Օպերատորի հետ պայմանագրի կնքում
- Օպերատորի կողմից հասանելիությունների տրամադրում
- Մուտք համակարգ



Համակարգում ապրանքի գրանցում



- Հաշվի համալրում
- **Ծածկագրի ԹՈՂԱՐԿՈՄ**



Դատա Մատրիքս ծածկագրի սքանավորման ժամանակ տեսնում ենք՝

ԴՐՈՇՄԱԿՈՐՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

✘ Ապրանքը չի կարող վաճառվել



ԱՊՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՈՄ

- Ծածկագրի մակնշում
- Ծածկագրի տպագրություն արտադրողի/ներմուծողի կողմից
- Ապրանքի դրոշմավորում (ծածկագրի փակցնում ապրանքի վրա)
- Ազդեգացիա



Դատա Մատրիքս ծածկագրի սքանավորման ժամանակ տեսնում ենք՝

ԴՐՈՇՄԱԿՈՐՄԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ

✘ Ապրանքը չի կարող վաճառվել



Վաճառքի ենթակա ապրանքի դրոշմավորված խմբաքանակի **շրջանառության մեջ ներդրում**՝ համակարգում ստեղծելով համապատասխան հաշվետվությունը



Դատա Մատրիքս ծածկագրի սքանավորման ժամանակ տեսնում ենք՝

ԴՐՈՇՄԱԿՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔ

✔ Ապրանքը կարող է վաճառվել





Դատա Մատրիքս ծածկագրի սքանավորում E-mark հավելվածի միջոցով


ՄԱՆՐԱԾԱՆ ՎԱՃԱՌՔԻ ԿԵՏ

ԱՊՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔ
ԱՊՐԱՆՔԻ ԵՏՎԵՐԱԴԱՐՈՂ



 Սպառողական ապրանքի սքանավորում

 Խմբային ապրանքի սքանավորում



Ապրանքի վաճառքի դեպքում սքանավորման արդյունքում տեսնում ենք՝

ԱՊՐԱՆՔԸ ՎԱՃԱՌՎԱԾ Է

Ապրանքի ետվերադարձի դեպքում սքանավորման արդյունքում տեսնում ենք՝

ԴՐՈՇՄԱԿՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔ
✓ Ապրանքը կարող է վաճառվել

ՀԴՄ սարքի միջոցով ապրանքի վաճառքի/ետվերադարձի մասին տեղեկատվության փոխանցում ՊԵԿ տեղեկատվական շտեմարան

Հավաքագրված տվյալների մշակում և ուսումնասիրություն ՊԵՏԵԿամուտների կոմիտեի կողմից



Դատա Մատրիքս ծածկագրի սքանավորում E-mark հավելվածի միջոցով

